

**«ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ**

13.09.2016 11:37



Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության երևանյան գրասենյակ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) երևանյան գրասենյակի աջակցությամբ իրականացնում է «**Անվճար իրավաբանական խորհրդատվություն**» դրամաշնորհային ծրագիրը:

Ծրագրի **հոկտեմբեր ամսվա** փուլին մասնակցելու համար հայտարարվում է **փաստաբանների մրցույթ**:

**Ծրագիրը ներառում է 3 ինքնուրույն բաղադրիչներ (ուղղություններ).**

ա) **անվճար իրավաբանական խորհրդատվություն մարզերում (բաղադրիչ 1),**

բ) **անվճար իրավաբանական խորհրդատվություն քրեակատարողական հիմնարկներում (բաղադրիչ 2),**

գ) **անվճար իրավաբանական խորհրդատվություն վարորդներին (բաղադրիչ 3):**

**Բաղադրիչ 1.**

**Հոկտեմբեր ամսվա ընթացքում Գեղարքունիքի մարզ** այցելություններ կազմակերպելու և քաղաքացիներին անվճար իրավաբանական խորհրդատվություն տրամադրելու համար ՀՀ փաստաբանների պալատը հայտարարում է մրցույթ՝ **Երևան քաղաքից թվով 2 փաստաբաններ, Գեղարքունիքի մարզից 1 փաստաբան** ընտրելու համար **(10-րդ խումբ):**

Մրցույթին կարող են մասնակցել առնվազն 2 տարվա փաստաբանական գործունեության փորձ ունեցող **քաղաքացիաիրավական** ուղղվածությամբ փաստաբանները **Երևանից և Գեղարքունիքի մարզից:**

**Բաղադրիչ 2.**

**Հոկտեմբեր ամսվա ընթացքում «Հրազդան» քրեակատարողական հիմնարկ** այցելություններ կազմակերպելու և ազատազրկման մեջ գտնվող անձանց իրավաբանական խորհրդատվություն մատուցելու համար ՀՀ փաստաբանների պալատը հայտարարում է մրցույթ՝ **թվով 3 փաստաբաններ** ընտրելու համար՝ **Երևան քաղաքից թվով 2 փաստաբաններ, Կոտայքի մարզից 1 փաստաբան** ընտրելու համար **(10-րդ խումբ):**

Մրցույթին կարող են մասնակցել առնվազն 2 տարվա փաստաբանական գործունեության փորձ ունեցող **քրեաիրավական** ուղղվածությամբ փաստաբանները **Երևանից և Կոտայքի մարզից:**

**Բաղադրիչ 3.**

**Հոկտեմբեր ամսվա ընթացքում** վարորդներին անվճար իրավաբանական խորհրդատվություն մատուցելու համար ՀՀ փաստաբանների պալատը հայտարարում է մրցույթ՝ **թվով 3 փաստաբաններ** ընտրելու համար **(6-րդ խումբ):**

Մրցույթին կարող են մասնակցել առնվազն 2 տարվա փաստաբանական գործունեության փորձ ունեցող **վարչաիրավական** ուղղվածությամբ փաստաբանները:

**Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել դիմում-հայտ (էլեկտրոնային նամակ)՝ կցելով 2եր ինքնակենսագրությունը (CV) անգլերեն և հայերեն**

լեզուներով՝ այն ուղարկելով [info@advocates.am](mailto:info@advocates.am) կամ [lyudvik.davtyan@gmail.com](mailto:lyudvik.davtyan@gmail.com) էլեկտրոնային հասցեներին:

**Դիմում-հայտերը և կից փաստաթղթերը չեն փաստաբանների պալատ կարող են ներկայացվել նաև փաստաթղթային եղանակով:**

**Դիմում-հայտում անհրաժեշտ է նշել այն բաղադրիչը, որին մասնակցելու համար ներկայացվում է հայտը, ինչպես նաև այն մարզը, որտեղ գործունեություն է իրականացնում դիմող փաստաբանը:**

**Դիմում-հայտերի ընդունման վերջնաժամկետն է 2016 թվականի սեպտեմբերի 23-ը:**

«Անվճար իրավաբանական խորհրդատվություն» դրամաշնորհային ծրագրի բովանդակությունը, ծրագրին մասնակցող փաստաբաններին ներկայացվող պահանջները, մրցույթի կազմակերպման հետ կապված մանրամասները նկարագրված են **ծրագրում:**

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք կապ հաստատել ծրագրի համակարգող փաստաբան Լյուդվիկ Դավթյանի հետ կամ գանգահարել շտաբի փաստաբանների պալատ:

**Ծրագրի համակարգող՝**

**Լյուդվիկ Դավթյան**

Փաստաբան, իրավ. գիտ. թեկնածու

էլ. փոստ՝ [lyudvik.davtyan@gmail.com](mailto:lyudvik.davtyan@gmail.com)

չեռ.՝ + 374 91 066 880

## Առաջարկվող նորություններ



**19.04.2016** շտաբի փաստաբանների պալատի կողմից ներկայացվել է 19.04.2016 թվականին իրականացված հարցազրույցների արդյունքները:



**17.05.2016** «ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ



**14.06.2016** «ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ



**14.07.2016** «ԱՆՎԾԱՐ  
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ  
ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ»  
ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ  
ԾՐԱԳԻՐ

```
Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```